



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3304 ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա
հեռ. +374-285-42036, 060521818
Էլ. փոստ kapan.syunig@mta.gov.am, info@kapan.am

3304 г.Капан, А.Манукян 5а
тел. +374-285-42036, 060521818

17 դեկտեմբերի 2018թ. N Ե-19/3207
Ձեր 28 նոյեմբերի 2018թ. N ՌՌ-32/805

«ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ Ռ. ՈՍԿԱՆՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Ոսկանյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին»
ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 7-րդ կետի, ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն
«Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանալու մասին»
որոշմամբ հաստատված «Հանրային ծանուցման և քննարկումների կարգի» 20 և 22 կետերի
պահանջներին համապատասխան՝ Ձեզ է ներկայացվում Կապանի համայնքապետարանի
նիստերի դահլիճում 11.12.2018թ., ժամը՝ 11:00-ին տեղի ունեցած «Ագապե» ՍՊԸ-ի կողմից
ներկայացված ՀՀ տարածքի 6-րդ պայմանական բլոկի Կապան համայնքում նավթի և
բնական գազի երկրաբանական ուսումնասիրության նախնական գնահատման հայտի
վերաբերյալ 2-րդ հանրային քննարկման արձանագրությունը, տեսաձայնագրությունը և
մասնակիցների ցանկը:

Առդիր՝ 20 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

**«Ագապե» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ տարածքի 6-րդ
պայմանական բլոկի Կապան համայնքում նավթի և բնական գազի
երկրաբանական ուսումնասիրության նախնական գնահատման հայտի
վերաբերյալ երկրորդ հանրային քննարկման**

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

17.12.2018թ

ք.Կապան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ և ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ որպես ազդակիր համայնք Կապանի համայնքապետարանի նիստերի դահլիճում 2018 թվականի դեկտեմբերի 11-ին, ժամը 11:00-ին տեղի ունեցավ «Ագապե» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ տարածքի 6-րդ պայմանական բլոկի Կապան համայնքում նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումների 2-րդ փուլը:

Քննարկմանը ներկա էին Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանը, «ԱԳԱՊԵ» ՍՊԸ գլխավոր տնօրեն Հրաչ Զաբրայանը, «ԱԳԱՊԵ» ՍՊԸ ֆինանսական գծով տնօրեն՝ Քրիստինե Վարդանյանը, ընկերության երկրաբան՝ Դավիթ Խոնդկարյանը, «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ աշխատակիցներ, ավագանու անդամներ, համայնքապետարանի աշխատակիցներ, լրատվամիջոցների ներկայացուցիչներ և բազմաթիվ քաղաքացիներ: Քննարկմանը մասնակից քաղաքացիներից մի քանիսը չցանկացան գրանցվել և ստորագրել մասնակիցների ցանկում:

Հանրային քննարկման մասնակիցների անհատական կազմը կցվում է սույն արձանագրությանը:

Հանրային քննարկումը վարեց Կապանի համայնքապետարանի գյուղատնտեսության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար՝ Ավետիք Համբարձումյանը: Նա ընթերցեց օրակարգը, որպես ծանոթություն հիշեցրեց, որ հանրային քննարկման վերաբերյալ կարելի էր ծանոթանալ ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայքում (www.mnp.am), «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2018 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 206 համարում, Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքի հայտարարություններ բաժնում (www.kapan.am): Համաձայն հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին 19 նոյեմբերի 2014 թվականի N 1325-Ն որոշման 15-րդ կետի 2-րդ մասի՝ հանրությունը կարող է գրավոր դիտողություններ և առաջարկություններ ներկայացնել ծանուցումից հետո 12 աշխատանքային օրվա ընթացքում:

Համաձայն օրակարգի՝ զեկույցի համար խոսքը փոխանցվեց «ԱԳԱՊԵ» ՍՊԸ ֆինանսական գծով տնօրեն՝ Քրիստինե Վարդանյանին: Նա նշեց, որ ընկերությունը ստեղծվել է 2015 թվականի մարտի 16-ին ՀՀ տարածքում նավթի և գազի